ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր
ԼՈՒՍԻՆԵ ԵՆԳՈՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

ՀՏԴ 811.19

ԲԱՌԱՅԻՆ-ՄԱՍՆԻԿԱՎՈՐ ԶՈՒԳԱՁԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱԲԱՐԻ ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ԿԱՐԳՈՒՄ

Բանալի բառեր. թվակազմություն, թվի քերականական իմաստ, զուգաձևություն, մասնիկավորում, կրկնություն, համադրական կառուցատիպ, վերլուծական կառուցատիպ:

Ключевые слова: категория числа, грамматическое значение, множественное число, супплетивизм, аффиксация, удвоение, синтетичный тип, аналитичный тип.

Key words: category of number, grammatical meaning of number, plural, suppletivism, affixation, reduplication, synthetical model, analytical model.

Գոյականի թվի քերականական կարգը գրաբարում տարատեսակ դրսևորումներ ունի, որով պայմանավորված է թվակազմական զուգաձևությունների իրողությունը:

Ընդհանրապես, թվի քերականական կարգում զուգաձևության իրողությունը կարելի է ներկայացնել որոշակի խմբավորումով՝ ելնելով այն հանգամանքից, որ թվակազմական զուգաձևությունները տարբերվում են ինչպես քերականական իմաստների նրբերանգներով, այնպես էլ ձևակազմական գործոններով:

Լեզվական փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հին հայերենի գոյականի թվի քերականական կարգում դրսևորվող զուգաձևությունները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնցից կարելի է առանձնացնել *իմաստաբանական հիմունքը,*

հիմքակազմությունը, հոգնակերտ հոմանիշ մասնիկների զուգորդումը և այլն[1]:

Գոյականի թվի քերականական կարգին բնորոշ մասնիկները իմաստաբանորեն միանշանակ հոգնակիակերտներ չեն. դրանց մի մասն արտահայտում է հոգնակիության, մյուս մասը՝ հավաքականության իմաստ, ինչպես՝ *եպիսկոպոսք - եպիսկոպոսունք, երեցք - երիցունք, նամակք – նամականի* և այլն[2]: Ըստ Հ. Պետրոսյանի՝ «Գրաբարում շատ քիչ է պատահում, երբ միևնույն հիմքը տարբեր հոգնակերտների հետ զուգորդվի: Սակայն հանդիպում են մասնավոր կազմավորումներ, երբ երկձև հոգնակի ունենք մի դեպքում բուն հոգնակերտով, մյուս դեպքում՝ «հավաքական» հոգնակերտով, թեև, իհարկե, դրանք գործածության հաճախականությամբ համարժեք չեն»[3]:

Թվակազմական զուգաձևությունները տարբերակվում են հիմքակազմության գործոնով, երբ թվակազմական մասնիկները զուգորդություն են կազմում հիմքերի տարբեր կառուցատիպերի հետ, ինչպես՝ *կոյսք // կուսանք, արմատք // արմատիք // արմտիք, աստեղունք // աստղունք, քոյրք // քորք* և այլն:

Ըստ էության, գոյականի թվակազմական մասնիկներն արտահայտում են հոմանշային հարաբերություն, հետևաբար նույն բառը կարող է ստանալ մեկից ավելի քերականական մասնիկներ հոգնակիության իմաստն արտահայտելու համար, ինչպես՝ *անք // անի.* անուանք // անուանի, *ք // ինք.* գահք // գահինք, *ք // եար // եր.* բանք // բանեար // բաներ, *ք // եան.* բերդք // բերդեան, *անի // այնի.* աւագանի // աւագայնի, *որայ // որեայ.* արտորայ // արտորեայ և այլն:

Թվի քերականական իմաստն արտահայտելու համար հայերենում հիմնականում գործում է մասնիկավորումը: Գրաբարում գոյականի հոգնակի թվի քերականական իմաստն արտահայտվում է նաև *արմատակրկնության* միջոցով: Այն դեպքում, երբ միևնույն քերականական իմաստն արտահայտվում է կրկնության և մասնիկավորման միջոցով, թվակազմական իմաստի դրսևորումը կարելի է անվանել *բառային-*

---

[1] Տե՛ս Ենգոյան Լ., Գոյականի թվակազմական զուգաձևությունները հին հայերենում (Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», № 2-3 (26-27), Ե., 2014, էջ 65-77):

[2] Հավաքականության իմաստ արտահայտող գրաբարյան հոգնակերտ մասնիկների մասին հանգամանորեն տե՛ս Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 49: Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 20: Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Ե., 2003, էջ 24-25:

[3] Տե՛ս Հ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Ե., 1972, էջ 145:

մասնիկավոր զուգաձևություն։ Զուգաձևության (զույգի) բաղադրիչների բնորոշման հարցում էական նշանակություն է ստանում նրանց արտահայտության պլանը։

Այսպես, *գունդ* բառի հոգնակի թվի համար գործածվում է *գունդ գունդ* հարադրավոր բարդությունը, կամ *դաս* գոյականի հոգնակիի համար՝ *դասադաս* համադրական բարդությունը և այլն։ Անշուշտ, վերոբերյալ զույգերը (գունդ գունդ // գուդք, դասադաս // դասք) թվակազմական զուգաձևություններ չեն, սակայն ակնհայտ է, որ դրանք արտահայտում են միևնույն՝ հոգնակիության քերականական իմաստը։ Այս կարգի զուգորդումները թվակազմական *տարբերակներ* կարելի է համարել։

Գրաբարի մատենագրության մեջ հանդիպում են այս կարգի տարբերակներ՝ ձևավորված արմատակրկնությամբ և արմատի ածանցական կազմությամբ. ուստի դրանց քննությունը որոշակի գաղափար կարող է տալ հին հայերենի թվակազմական զուգաձևությունների դրսևորումների վերաբերյալ։

Փորձենք ցույց տալ դրանց ձևակազմական յուրահատկություններն ու արտահայտած քերականական իմաստները 5-րդ դարի մակարդակում։

Մեր ընտրանքում եղած փաստական օրինակները թույլ են տալիս դրանք ներկայացնել որոշակի խմբավորումով, քանի որ այդ տարբերակների բառական եզրերը միևնույն ժամանակ ունեն կառուցվածքային տարբերություններ։ Հիմք ընդունելով զուգաձևության բառական եզրերի ձևավորման յուրահատկությունները՝

այդ կարգի տարբերակների բաղադրիչները կարելի է բաժանել երկու խմբի՝ համադրական բարդություններ և վերլուծական բարդություններ։

ա) Տարբերակների մեկ եզրը համադրական կառուցատիպի բարդություն է։

Համադրական կրկնավոր բարդությունները թվի քերականական իմաստով համարժեք են բարդության արմատի ածանցական կազմությանը։

Այդ կարգի տարբերակները միմյանց նկատմամբ ցուցաբերում են հոմանշային հարաբերություններ՝ կազմելով թվակազմական տարբերակներ (զուգաձևություն)։ Համադրական կառուցատիպով հոգնակիի իմաստ են արտահայտում *գոյնագոյն, դասադաս, գունդագունդ* և այլ բարդություններ, որոնք քերականորեն համարժեք են իրենց արմատի ածանցական կազմություններին՝ *գոյնք, դասք* և *գունդք։*

Արմատակրկնությամբ կազմված *գունդագունդ* բարդությունն ունի «բազմամարդ, գունդ գնդի հետևից, գնդեր» իմաստներ, հմմտ. Ահաւասիկ ես ածից ի վերայ քո … *գունդագունդ* հեծելովք ազգաց բազմաց յոյժ (Եզեկ., ԻԶ. 7)։

Գունդք ածանցական կազմությունն ունի «գնդեր» իմաստը, հմմտ. Սոքա են *գունդք* ղեւտացւոց (Թիւք., Գ. 21)։

Դասադաս կրկնավոր բարդությունն ունի «դաս-դաս, խումբ-խումբ, խմբերով, տարբեր խմբեր» (հոգնակիության) իմաստ, հմմտ. Դարձեալ յիւրաքանչիւր ապարանիցն *դասադաս* մտանէին ի համաշխարհի խնդրուածս (Բ. Մակ., Գ. 18)։

Դաս բառը հոգնակիակերտ –ք մասնիկով առնչվում է *դասադաս* կրկնավոր բարդության արտահայտած հոգնակիության իմաստին, հմմտ. Եւ հրամայէ զամբոխն ի բազում *դասս* որոշել, և ի վերայ իւրաքանչիւր դասուց զընտիրս ի ճարտարացն վարպետս կարգել (Խոր., 53)։

Արմատակրկնությամբ կազմված *գոյնագոյն* բարդությունն ունի «գույնզգույն, բազմերանգ, տարբեր գույներ» նշանակություն, հմմտ. Եւ ի *գոյնագոյն* ծաղիկս պսակեալք ուրախութեամբ եւ ցնծութեամբ … գոհանային զԱստուծոյ հարցն նոցա (Գ.Մակ. Է. 11)։

Գոյն բառը հոգնակիակերտ –ք մասնիկով նույնպես առնչվում է *գոյնագոյն* կրկնավոր բարդության արտահայտած հոգնակիության իմաստին, հմմտ. Ի նմանէ ծնեալ որդունս, ի զարդ կարմրատեսիլ *գունոց* (Փարպ., 10)։

բ) *Տարբերակների մեկ եզրը վերլուծական կառուցատիպի բարդություն է։*

Այս կարգի զուգաձևությունների եզրեր են դառնում հետևյալ վերլուծական բարդությունները՝ *դաս դաս, գունդ գունդ, ազգ ազգի, (ի) տեղիս տեղիս* և այլն։ Այս բարդություններն իրենց բառաքերականական իմաստով արտահայտում են հոգնակի թվի քերականական իմաստ. հոգնակիության իմաստի արտահայտման առումով այդ բառերին համարժեք են դրանց արմատական բաղադրիչների հոգնակիակերտ ածանցով կազմությունները։ Հմմտ. *դաս դաս և դասք, գունդ գունդ* և *գունդք, ազգ ազգ* և *ազգք, (ի) տեղիս տեղիս* և *տեղիք։*

Դաս դաս վերլուծական բարդությունն արտահայտում է այն նույն իմաստը, ինչ համադրական կազմությունը՝ *դասադաս։* Հմմտ. Եւ բազմեցան *դասք դասք,* ուր հարեւր եւ ուր յիսուն (Մարկ., Զ. 40)։

Քերականական իմաստով նրան համարժեք է հոգնակիակերտ մասնիկով կազմությունը՝ *դասք։*

Գունդ գունդ վերլուծական բարդությունը գրաբարում գործածվում է *գունդս գունդս* ձևով՝ արտահայտելով հոգնակիության իմաստ, հմմտ. Եւ *գունդս գունդս* դարձեալ գումարէին ի նոցանէ յերկիր հեռաւոր (Եղ., 21)։

Գունդ գունդս հարադրական բարդությունը քերականորեն համարժեք է հոգնակիակերտ ածանցով կազմությանը՝ *գունդք։*

Ազգ ազգ վերլուծական բարդությունն արտահայտում է հոգնակի թվի քերականական իմաստ՝ «տեսակ-տեսակ, տարբեր տեսակի» նշանակություններով, ինչպես՝ *Զազգ ազգ* սերմանքն սերմանեն (ՆՀԲ, 1, 7)։

Նույն իմաստն արտահայտվում է հոգնակիակերտ մասնիկով կազմությամբ՝ *ազգք,* հմմտ. Զիա՞րդ միոյ միոյ ըստ իւրաքանչիւր *ազգաց* անուանս յօրինէր (Եզն., 68)։

Ի տեղիս տեղիս վերլուծական բարդությունը «տարբեր տեղեր՝ կողմեր. տեղանք» նշանակությամբ արտահայտում է հոգնակի թվի իմաստ, ինչպես՝ Արքայ Անտիոքոս՝ կողմանցդ Եգիպտացւոց *ի տեղիս տեղիս,* առ սպարապետս եւ առ զաւրավարս, եւ առ զաւրս՝ ողջո՛յն (Գ. Մակ., Գ, 8)։

Հոգնակի թվի իմաստով նրան համարժեք է *տեղի* («վայր, կողմ, սահման») արմատական բաղադրիչի հոգնակիակերտ մասնիկով կազմությունը՝ *տեղիք։* Հմմտ. Շինէ և յանապատ և յանմարդ *տեղիս* եղբայրանոցս և մենաստանս (Խոր., 280)։

Այսպիսով, գոյականի թվի քերականական կարգում թվակազմական զուգաձևությունների քննությունը ցույց է տալիս, որ թվակազմական տարբերակները պայմանավորված են նաև ձևակազմական գործոններով։

Բառային-մասնիկավոր զուգաձևությունների քննությունը կարելի է շարունակել 5-րդ դարի մատենագիտական գործերի նոր փաստական նյութերի հիման վրա։ Մեր ընտրանքում եղած օրինակների ուսումնասիրությունը հստակ ցույց է տալիս, որ լեզվական տվյալ գոյավիճակի սկզբնական շրջանում լեզվական այդ իրողությունը որոշակի դրսևորումներ ունի, որոնց շրջանակներում զուգաձևությունների կազմավորման գործոն է համարվում նաև դրանց եզրերի արտահայտության պլանը՝ բառային-կրկնավոր և մասնիկավոր կառուցատիպերով։

Բառային-մասնիկավոր զուգաձևությունները գոյականի թվի քերականական կարգում դիտվում են տարբերակներ (զուգաձևություններ) և ձևակազմական հատկանիշներով բնորոշվում են եզրերի արտահայտության պլանով (կրկնավոր բարդություն և հոգնակիակերտ մասնիկով բառաձև)։

Օգտագործված գիտական գրականություն

1. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976։
2. Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852։
3. Ենգոյան Լ. Գոյականի թվակազմական զուգաձևությունները հին հայերենում (Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», № 2-3 (26-27), Ե., 2014, էջ 65-77)։

4. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի դասագիրք, Ե., 2003:
5. Պետրոսյան Հ., Գոյականի թվի կարգը հայերենում, Ե., 1972:

2. Համառոտագրություններ

Ա) Մատենագիտական երկեր և բառարաններ

Եզն . - Եզնկայ Կողբացւոյ՝ Բագրեւանդայ՝ եպիսկոպոսոյ Եղծ աղանդոց, Վենետիկ,
1826:

Եղ. - Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ե.,
1957:

Խոր. - Մ.Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913:

ՆՀԲ - Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հհ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837:

Փարպ. - Ղ.Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1904:

Բ) Աստվածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց
(Հայաստանի Աստվածաշնչային ընկերութիւն, Ե., 1997)

Եզեկ.- Եզեկիէլ:
Թիւք.- Թիւք:
Ա. Մակ.- Գիրք Մակաբայեցւոց Ա:
Բ. Մակ.- Գիրք Մակաբայեցւոց Բ:
Գ. Մակ.- Գիրք Մակաբայեցւոց Գ:
Մարկ.- Աւետարան ըստ Մարկոսի:

Լ.Խաչատրյան, Լ.Ենգոյան

Բառային-մասնիկավոր զուգաձևություններ գրաբարի գոյականի թվի կարգում

Ամփոփում

Գրաբարում գոյականի թվակազմական զուգաձևությունները, ի թիվս այլ քերականական միջոցների, արտահայտվում են նաև *կրկնությամբ և մասնիկավորմամբ:* Բառային-մասնիկավոր զուգաձևությունների մի եզրում առկա են կրկնավոր բառեր, մյուսում՝ մասնիկավոր կազմություններ, ինչպես՝ *ազգ ազգ – ազգք, գունդագունդ- գունդք* և այլն: Բառային-մասնիկավոր զուգաձևություններում կրկնավոր բարդությունները հանդես են գալիս ինչպես վերլուծական, այնպես էլ համադրական կառուցատիպերով:

Л.Хачатрян, Л.Енгоян

Лексико-аффиксальные супплетивизмы числа существительного в древнеармянском языке

Резюме

В древнеармянском языке супплетивизмы числа существительного, наряду с другими средствами, проявляются также при помощи удвоения /редупликации/ и аффиксации. Одним из компонентов супплетивизма такого рода является дупликативное слово, а другим – аффиксальное /ср: *ազգ ազգ – ազգք, գունդազունդ- գունդք/.* В лексико-аффиксальных супплетивизмах удвоенные компоненты выступают как аналитичными, так и синтетичными структурными типами.

L.Khachatryan, L.Yengoyan

Lexical and affixal suppletivism in the number category of nouns in Old Armenian

Summary

In Old Armenian, suppletivism in the category of number is being manifested by forms of reduplication and affixation. In these kinds of suppletivisms, one of the components is a word that is present, in the other, it's an affixal form / *ազգ ազգ – ազգք, գունդազունդ- գունդք/.* In lexical and affixal suppletivisms, the reduplicated components are being expressed with analytical and/or synthetical models.